

# Ծ Ի Ա Ծ Ա Ն

## Մ Ա Ն Ի Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

ՄԵԾ ՆԱԻՈՒՆ ՄԵԾ ԱԼԷԿՈՅՈՒԹԻՒՆԸ.

Անգղիոյ ու բոլոր եւրոպայի լրագիրները սաստիկ վախով ու զարմացմամբ պատմեցին այս տարի սեպտեմբեր ամսոյն մէջ Կրէթ-Իսթէոն անունով վիթխարի շոգենաւին գլխուն եկած փորձանքը: Ինչպէս որ շատին յայտնի է, այս շոգենաւին նմանը մինչեւ ցայժմ չէ եղած աշխարհիս երեսը՝ իւր ահագին մեծութեանը կողմանէ: Անգղիացիք իրենց գերածայրեալ ճարտարութիւնը ասոր վրայ թափելով, մտքերնին դրած էին թէ գէթ այս շոգենաւը պիտի չլախնայ երբէք ովկիանոսի ահագին ալիքներէն. իրացնէ ալ նա ովկիանոսին մանր մունը ալէկոծութիւնները բանի տեղ չդնելով՝ բանի մը անգամ Անգղիայէն Ամերիկա ամենայն յաջողութեամբ գնացեր ու եկեր էր: Բայց այս անգամ նոյն յաջողութիւնը չունեցաւ: Իրեք չորս հարիւր հոգւոյ ջափ՝ միայն ճանապարհորդք, մանաւանդ կանայք, տղայք, եւ ծովէ վախճող ուրիշ շատ մարդիկ, կմրտեն այն շոգենաւն որ Ամերիկա երթան: Խրոխտ շոգենաւը, — որ իրաւամբ Լեւիաթան եւս ըսւած է, — առջի բերան փառաւորապէս ու տիրաբար առաջ կվազէ՝ ովկիանոսի լայն ալիքներուն վրայէն սահելու եւ թռչելու պէս: Բայց ցամաքէն 200 մղոնի չափ հազիւ թէ հեռացեր էր երբոր հիւսիսային արեւմտեան հովը քանի կերթայ կսաստկանայ, կզայրանայ, ծովուն ալիքները կխոշորնան կբարձրանան, Լեւիաթանը անոնց կատաղի զարնուածքէն հրաբուխի մը պէս կսկըսի տքալ. մէջիններուն առաջին սրտի հանգըստութիւնը իսկոյն կերթայ, առաջին ծիծաղը շուտով տրտմութեան ու տագնապի կդառնայ, արհամարհանքը տարակուսանքի, տարակոյսը վա-

խի ու սարսափի. վասն զի ահագին շոգենաւը այն անսահման ովկիանոսին փրփրալից կտտաղութեանը մատնուած՝ փոքրիկ նաւակի մը պէս կսկըսի ծեծուիլ, ասդիս անդին նետուիլ, ամէն կողմէն ջուր առնուլ ու ջուր պարպել: Ճանապարհորդները ծակէ ծակ մտած, շատն ալ հետզհետէ գետինները փռուած՝ հոգեվարք քաշելու պէս կտագնապին կհառաչեն, կկանչուրուտեն ծովուն անտանելի շարժումներէն. շոգենաւուն մէջի կովերն անգամ կընկնին կմեռնին. նաւավարներուն մէջէն միայն խիստ կտրիճները կընան ոտքի վրայ կենալ: Վերջապէս շոգենաւուն ղեկին գլուխը կկտորի. նաւապետը առջի բերան կչարջարուի՝ շոգենաւը դէպի հովին դէմ քշելու, յետոյ նա եւս գրեթէ կյուսահատի, ու ինքը հովին սաստկութենէն յաղթուած՝ դէպ ի Անգղիա կքըշուի, այնպէս որ 300 մղոն տեղ երթալէն ու երկու օր սարսափելի ալէկոծութիւն քաշելէն յետոյ՝ կդառնայ Լեւիաթանն ու կմրտնէ Անգղիա՝ վնասուած, կտորտուած, մէջի ամէն զարդարանքները փճացած, ապակիներն ու կախկարասիքը ջարդ ու բուրդ եղած, ճամբորդները գրեթէ կիսամեռ եւ սնտուկները կտոր կտոր, ստակներն ու զարդերը ցիր ու ցան, եւ այն հսկայածեւ վիթխարի հրաշունչ շինուածքը ովկիանոսի ամեհի ալիքներուն պատերազմէն յաղթուած:

Ահա այսպէս մեծ եղաւ մեր ժամանակիս մեծ նաւուն ալէկոծութիւնը, որ մտքերնիս կըծըգէ Իմաստնոյն խօսքը թէ «Ձի զայն թէպէտ եւ ցանկութիւն շահիցն հնարեցաւ, եւ ճարտարապետ իմաստութեամբ կազմեաց, սակայն քո հայր՝ վարէ Տեսչութիւնդ:»

ՄԱՐԿՈՒՍ ՄԵՌԱՅ ԼԻՆԵԼՈՒՆ ՍՏՈՅԴ ՆԵԱՆ.

Տեղ տեղ, մանաւանդ արեւելք, այնչափ կըպատահին սուտ մահեր, մահախանգոյն թմրութիւններ, ողջ ողջ մարդ թաղելներ, որ կարծէ գիր անցընել ստոյգ մահը առերեւոյթ մահէն որոշող ո՛ր եւ իցէ նշանները: Ամենէն ստոյգ նշանը մեռելին հիտելու սկսիլն է, կըսեն. բայց որովհետեւ շատ տեղ պարսաւելի սովորութիւն մը կայ մե-

ռելը նոյն օրը կամ երկրորդ օրը արտորոնք թաղելու, այս նշանը չդիտուի: Ոմանք ալ մեռելին քիւն առջեւը հայլի կըռնեն. եւ եթէ հայլին երեսը բարակ գոլորշիով մը ծածկուի, յայտնի կլինի թէ մեռելին շնչառութիւնը դեռ բոլորովին չէ կտրուած: — Մօտերս Փարիզու անուանի բժիշկներէն մէկը, Պ. Փլուլիէ զանազան փորձե-

ըով այս գիւտը գտեր է որ իմանայ թէ մեռելին սրտին շարժումը բոլորովին դադարե՞ր է թէ չէ. վասն զի մէկուն սրտին զարնուածքը բոլորովին դադարածին պէս՝ ըսել է թէ մեռած է: Փլուվիէն մեռելին սիրտը սուր ու բարակ ասեղ մը կխոթէ. թէ որ իրօք մեռած է, ասեղը անշարժ կկենայ.

իսկ եթէ ողջ է, ասեղը կանոնաւոր կերպով կը շարժի: Ոմանք կարծեն թէ ասեղին ծակուածքէն հիւանդին սիրտը կխոցուի, ու իրօք կրնայ մեռնիլ. բայց այդ կարծիքին ծուռ եղածը փլուվիէն շատ փորձերով ցուցուցեր է, եւ այժմ նոր փորձեր ալ կընէ զանազան կենդանեաց վրայ:

#### ՀԱՐՈՒՍՏ ՄՈՒՐԱՑԿԱՆ ՄԸ.

Մոսքուայի մէջ մուրացկան մը կայ որ ատենով տէրութեան պաշտօնի մէջ գտնուած ու աստիճան եւս առած է եղեր: Այս մարդը վրայի հին հագուստէն ու վրան պառկելու խսիրի կտորէն զատ բան չունի: Իւր բնակարանին համար ամիսը 75 քոփեկ (3 ֆրանք) կվճարէ: Ամէն առաւօտ կանուխ կենէ կերթայ մուրալու, եւ եթէ ձեռքը ճերմակ հացի կտոր մը ընկնի՝ կծախէ եղեր: — Բարեկարգարանի պաշտօնեաները մօ-

տերս կըռնեն այն մուրացկանը, եւ կգտնեն վըրան 70,000 ֆրանքի փոխառութեան մուրհակներ, այսինքն ուրիշներու փոխ տուած այսքան ստրկին մուրհակները, Մոսքուայի դրամատունը իւր անունովը դրած ստրկին մէկ տոմսակը 48,070 ռուպլի արծ., եւ պատրաստ փող 6000 ռուպլի: — Ըսելէ թէ սա եւս այն ողորմելիներէն է՝ որոց Աստուած հարստութիւն կուտայ, բայց վայելելու հրաման չի՛տար, ինչպէս որ կըսէ Սողոմոն:

#### ԱՆԳՂԻԱՅԷՆ ԵԼԱԾ ԳԵՏՆԱԾՈՒԹԸ.

Բրիտանիոյ մէջ գտնուած ածխահանքերուն թիւը այժմ 2654 է. ասոնցմէ 1943-ը Անգղիոյ մէջ են, 235-ը Ուէլսի մէջ, 405-ը Սկոտլանդի մէջ, եւ 71-ը Իռլանդիոյ մէջ: Ասոնց ամենէն ելած ածուխը տարին 65 միլիոն տակառաչափ է, որ 400 միլիոն փուտէն աւելի ըսել է: Ածխահանքերուն մէջ այժմ 250 հազար մարդու չափ կըբանի: Ելած

ածուխին գինը՝ տեղէն չվերցուած՝ 16 միլիոն 700 հազար սթեռլին է: — Բայց յայնմանէ նոյն ածխահանքերուն մէջէն 14 միլիոն սթեռլինի երկաթ եւս կենէ: — Այս ահագին հարստութիւնը թերեւս հազարաւոր տարիներով թաղուած պիտի մնար՝ թէ որ Անգղիացւոց ազգին աշխատասիրութեամբն ու ճարտարութեամբը դուս չհանուէր:

#### ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ.

*Օրագրոյս Հոկտեմբերի 1-ին Հանելուկն է Տ գիրը:*

*Տարւոյս Օրացուցին Հոկտեմբերի առաջին Հանելուկն է Գինի, — երկրորդը Կեռնու:*

